ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 230

<09> 12 2014թ.

ք. Արտաշատ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Նորամարգի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում սույն թվականի դեկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 15-ը՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Նորամարգի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախահաշիվներով հաստատված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 229

ք. Արտաշատ

«08» 12 2014թ.

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Սարգսյանին տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդը՝ ս/թ դեկտեմբերի 22-ից փետրվարի 2-ը ներառյալ:

2.Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 228 գ. Արտաշատ

«08» 12 2014թ.

ՎԱՐՍԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետերով՝

<< Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Վարսիկ Եղիազարյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 5 օր տևողությամբ, 2014 թվականի դեկտեմբերի 8-ից դեկտեմբերի 12-ը ներառյալ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ